

Լ Ե Ն Ե Յ Ն Ե

Հետեւեալ անամուկ տաղը կը գտնուի Ս. Արոտոյս ք. 1485 եւ ք. 3040 գրչագիրներու մէջ. առաջինը ունի երկիցս: Այս երեք օրինակները իրարմէ շատ փոքր տարբերութիւններ միայն կը ներկայացնեն: Տաղիս վերնագիրը ք. 1485ի առաջին օրինակին մէջ է «Տաղ Ծննդեան», իսկ երկրորդին մէջ «Տաղ Սուրբ Աստուածածնի»: Երեք օրինակներէն շաւաղոյնը ք. 1485ի երկրորդ փոփոխակն է, որ իններորդ եւ քսաներեւոթորդ տողերու մէջ՝ «ասուեք» հնագոյն ձեւը ունի, մինչդեռ նոյն ձեւագրին առաջին փոփոխակը կ'ըսէ «այնեք», իսկ ք. 3040 ձեւագիրը աւելի սղուած ձեւով «ասեք»:

ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Անճառելի բանն ի Հօրէ, թէ ինչ աննման է,
 Լոյս ծագեաց մեզի համար, խիստ գեղեցիկ է:
 Գաջ արծիւն ողջոյն երես, թէ ինչ աննման է,
 Սուրբ Կուսին յականջն ի վայր, թէ ինչ գեղեցիկ է:
 Ծաղկեցաւ ծառն կենաց, թէ ինչ աննման է,
 Լուսեղէն պըտուղ երբ, թէ ինչ գեղեցիկ է:
 Գետին մեծ եւ գովելի, թէ ինչ աննման է,
 Մարգարէն որ վրկայեաց, թէ ինչ գեղեցիկ է:
 Ծառն շուք առնէր տակին, թէ ինչ աննման է,
 Լայն ու մեծ տերեւ ունէր, թէ ինչ գեղեցիկ է:
 Իւր ճրդերն էր միաբան, թէ ինչ աննման է,
 Աղաւներն ի յել ու էջ, թէ ինչ գեղեցիկ է:
 Ծովըն մեծ ովկիանոս, թէ ինչ աննման է,
 Լուսատու ակն ի միջին, թէ ինչ գեղեցիկ է:

Անճառելի բանն ի Հաւրէ, այն Հայր Աստուածն է,
 Լոյս ծագեաց մեզի համար, իւր սուրբ որդին է:
 Գաջ արծիւն ողջոյն երես, այն Գարբիէն է,
 Սուրբ Կուսին ականջն ի վայր, այն սուրբ Հոգին է:
 Ծաղկեցաւ ծառն կենաց, Աստուածածինն է,
 Լուսեղէն պըտուղ երբ, իւր միածինն է:
 Գետն մեծ եւ գովելի, գետ Յորդանան է,
 Մարգարէն որ վրկայեաց, սուրբ Յովհաննէս է:
 Ծառն շուք առնէր տակին, Յիսուս Քրիստոս է,
 Լայն ու մեծ տերեւ ունէր, սուրբ առաքեալն է:
 Իւր ճրդերն էր միաբան, սուրբ մարգարէն է:
 Աղաւներն ի յել ու էջ, արդար հոգիքն է:
 Ծովըն մեծ ովկիանոս, Երուսաղէմն է,
 Լուսատու ակն ի միջին, սուրբ Գերեզմանն է:

Հրատ. Ն. Վ. ԾՈՒՎԱԿԱՆ